Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

15.03.2019թ. ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի պետի տեղակալ, արդարադատության կապիտան՝ Ռ.Գինոսյանս, ուսումնասիրելով 20.02.2019թ. վերսկսված թիվ 00109751 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.01.2013թ.-ին տրված թիվ ԵՇԴ/0864/02/12 կատարողական թերթի համաձայն պետք է Դավիթ Չիտչյանից և <Տեխնոֆիտ> ՍՊԸ-ից հօգուտ <Ամերիաբանկ> ՓԲԸ-ի համապարտության բռնագանձել 48.088,57 Եվրո և վճարված 487.473,80 ՀՀ պետական տուրքի գումարը, ՀՀ քաղ. օր-ի 411 հոդվածի կիրառմամբ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պարտավորության կատարման օրը 47.500 Եվրոյի նկատմամբ հաշվեգրել և բռնագանձել տոկոսագումար օրական 0.1 տոկոսի չափով, բռնագանձումը տարածելով գրավադրված գույքի վրա, մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը պարտավորությունների հաշվարկը շարունակել պայմանագրով սահմանված պայմաններով ու կարգով:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել գրավի առարկա հանդիսացող Կոտայքի մարզ, Քասախ համայնքում գտնվող 41.800 քմ գյուղատնտեսական նշանակության հողի վրա, ծածկագիր 07-065-0294-0018, որը <Ամիտաս Գրուպ> ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 23.700.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ գույքը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1.	Կոտայքի մարզ, Քասախ համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 41.800 քմ. հողամաս /արոտ/, ծածկագիր 07-065-0294-0018	23.700.000 ՀՀ դրամ	17.775.000 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ **06.05.2019թ.:**

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

<u>Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն</u> Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ՝ **Ռ.ԳԻՆՈՍՅԱՆ**